



ԱՂԳԱՅԻՆ

ՏՆՕՐԷՆ ԽՄԲԱԳԻՐ

Ե Ի

ՊԱՏԱՍԻԱՆԱՏՈՒ

ՔՆԻԿ Մ. ԹԻՒՂԵՆՏՅԱՆ

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ

Գաղթի Բնակչության Բարձրացումը և Սոցիալական Պայքարը

ԹԵՐԹԸ 30 ՓԱՐԱՑ

Լրագրող Ն. Բ. Բեյքովի հոդվածը...

ՏԵՂԱԿԱՆ

ՔՐԻՍՏ. ՋԻՆԻՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Անցեալ շաբաթուան սկզբը...

Այս զինուորատուութեան խնդիրը...

Այս առթիւ հարկ կ'համար...

րեր էին Մասիս և Մանգումէ...

«Քրիստոնեայններն ալ զինուոր...

Քրիստոնեայք, եթէ զինուորականութիւն...

Ձինուորական վիճակարկութիւնը...

Ըստ արտաքին երևութիւն...

կոչելու միջոցն ու որոշումը...

Դժբաղդաբար գործին վիճակն...

Ահա ասոր համար է որ Տաճկաստանի...

Բ. Դուռը իր տարեգրութեան...

համար կ'գործածուի— իրենց սրտին...

ծած եղան(1) . . .

Խորհրդարանական վիճա-
բանութեանց մէջէն Յունական
լեզուին դուրս ձգուին ալ ոչ
նուազ վնասակար պիտի ըլլայ,
զանոնք տաճկերէն լեզուն ըն-
դունելու հարկագրելով: Բայց
յոյներն երբէք յանձն չպիտի
առնուն ասանկ բարբարոս լեզ-
ուի մը դարձածութիւն ընդու-
նել, ուրիշ բան է եթէ լուսնի
և զորութեամբ ընդունել ասն
դայդ իրենց, բայց ժամանակն
ալ կարծեմք այնքան ազէկ
ընտրուած չէ այս սեռակ ծայ-
րայեղ միջոցներու գիծերու:

. . . Ասանք իրենց բարձ-
րագոյն ակումբներուն մէջ այն-
պէս կարծեցին թէ քանի մը
կտոր օրէնքով, Սահմանադրու-
թեամբ մը, որոյ ազատական
ոգին ալ սեղմուեցաւ վերջէն
քուէարկեալ սահմանադրական
օրէնքներով, բաւական պիտի
ըլլար 400 տարիէ ի վեր ընկճ-
եալ հարստաբարեալ ժողո-
վարդներն երկրին հետ յարե-
լաւ և միացնելու, Գէպերը ա-
ւելի ազէկ պիտի կարենան ցոյց
տալ այս հաշիւներուն ապար-
դիւն և ոչինչ ելնելը:

Ի մի բան, քրիստոնէայք
զինւոր չպիտի ըլլան, իսկ եթէ
ըլլող ալ զանախ՝ տկամայ և
չուզելով պիտի երթան պատե-
գրութիւնը, նոյն խոյ տաճիկ
ժողովրդին իր այժմու վերադ-
րած բացառիկ իրաւունքներով
ալ հանդերձ, ասկէ 15-20 տա-
րի առաջ հրատարակուած ըլ-
լար, թերևս այն ատենէն մին-
չև հիմայ՝ ժողովարդներն սո-

(1) Ընթերցողք կ'ընչին
հարկաւ թէ նամակին ակնար-
կել ուզած այս գէպքը՝ անց-
եալներն օտ: Խորհրդարանին
մէջ յուզուած այն խնդիրն էր,
յորում յոյն երեսփոխանք կը
պնդէին թէ ժողովականաց ընտ-
րութեան նոր օրէնքին մէջ մահ-
մտական և ոչ-մահմտական
որոշիչ բառերուն գործածու-
թիւնը վերցուի, որպէս զի յու-
նաբնակ դաւաճներն կարենան
այս կերպիւ իրենց մեծամաս-
նութեանը շնորհիւ՝ ժողով-
ներէն դուրս նետել տաճկերէն
ու միայն յոյներէն բաղկացնել:
Այս պահանջումը՝ մեզ Հայոցս
համար ալ վնասակար կարճ մը
ունենալով, հարկադրի երեսփո-
խանք տ, ինչպէս յայտնի է
տաճկաց հետ միացած, այդ-
բարեփոխումը մերժելով չըն-
դունեցին: Այս բանին համար
է որ վերագրեալ նամակն ալ,
հակառահմանադրական արարք
մը կ'անուանէ զայն, առ որ
հայերն ալ մասնակցեր էին:

Ծ. Ի.

վորած ու վարժուած ըլլային
իրաց այս նոր ընթացքին Բայց
քրիստոնէայք մինչև ցարդ մի-
միայն պարտականութիւններ
ունեցան կատարելու, առանց
իրապէս քաղաքային ոչ ալ սե է
քաղաքական իրաւունքներ ու-
նենալու և վայելելու: Հայ-
րենեաց համար արիւն թափ-
ուիլը՝ այս կերպով չըլլար:

Ա Չ Պ Ա Յ Ի Ն

Ահաւասիկ մեր նախորդ
թուով յիշատակեալ Ազգ. Մա-
տենագարանի Տնօրէն Ժողովոյ
կողմէն մեզ ուղղեալ նամակը,
զորոյ հրատարակութիւնը խոս-
տացած ըլլալով, այսօր կ'փու-
թամք կատարել մեր այդ
խոստումը՝ գիտողութիւննիս
վարժան թողով:

. . . Խմբագիր Լրագրի,

Ամեն. Սրբազան Պատրի-
արք Հօր՝ ազգային Մատենա-
գարան գալուն վրայ, ձեռք բեր-
ուած տեղեկութիւններն սխալ
ըլլալուն, կը խնդրեմ որ բարե-
հասկնալ զայն ուղղել և արձա-
գանդ չըլլալ զրպարտութեանց:

Առջի արթամ օր լուր ա-
ռինք թէ Ս. Պատրիարք Հայրը
բարեհասկնալ է իր ներկայու-
թեամբք ազգային Մատենա-
գարանը պատուել ինքն արդէն
ըլլալով, իր այս երբորդ գա-
լուստը (երկու անգամ ևս ա-
ռաջ և կամ էր) բնականա-
բար ամենուս շնորհակալութիւն
պատճառեց: Մատենագարանի
ընկերութեան Տնօրէն Ժողովոյ
անդամք Մատենագարան գա-
լով, անասնք որ Բաղ. ժողովը
նիստ ունի, ուստի չուզեցինք
ներկայանալով իրենց դորձոցը
արդեւք ըլլալ, այլ վերք թաղ-
խորհրդարանը ապտեցինք մին-
չև երկկողմի ժողովը վերջացաւ:
Այն ատեն Հիւնքեարպէտէն-
տեան Տ. Յովհաննէս քահանայն,
Հալաճեան Բարսեղ էֆ. և ևս
ներկայացանք Ս. Պատրիարք
Հօր հրամանն իմանալու ի մա-
սին Մատենագարանի:

Սրբազան Պատրիարք Հայրն
ալ իր կամքն մեզ յայտնելու
շնորհն բրտ, սա պէս թէ, ինքն
պատշաճ չտեսնելով նախորդ
յարկին մէջ Բաղ. ժողովոյ նիս-
տերուն ներկայ գտնուիլ, որո-
շեր է առժամանակեայ կերպով
ազգային Մատենագարանի մէջ
գումարել Բաղ. ժողովը, և թէ
ինքը բնաւ չուզեր Մատենա-
գարանի գործերուն արդեւք
ըլլալ, միայն շարժմը մէկ օր,
կամ առ առաւելն երկու օր
նիստ պիտի ընէ կէս օրէն ետ-
քը: Իսկ մնացած հինգ օրը,
բնաւ, թող Մատենագարանը
անարդեւ իր գործը շարունա-

կէ, որուն համար մեք ալ մեր
շնորհակալութիւնը յայտնեցինք
Սրբազան Հօր:

Սրբ. Սրբազան Պատրիարք
Հայրը մեզ պաշտպան, ինքն
մեզի դէմ արդեւք մը չունի,
մանաւանդ. Մատենագարանի
մէջ իւր բարձր ներկայութիւնը
ընկերութեան համար ինչ կա-
րեւորութիւն ունենալը յայտնի,
մեք շնորհակալ, ուսկից կրնայ
հետեւել թէ մեք Սրբազան
Հօրը հակառակ եղած ըլլամք
կամ ինչո՞ւ ինքն մեզի վշա-
ցած:

Մեք ամենայն օրինաւորու-
թեամբ ընկերութիւն մը կաղ-
մած եմք հոն, ազգային Մա-
տենագարան մը հաստատելու
համար, որու պէտքը ամեն
խոհական ոք կրնայ հասկնալ.
մեք ուրիշ նպատակ չունեմք
բայց միայն ազգային գրական
յառաջդիմութիւնը, մեք մեզի
ամեն ոք ընկեր կընդունիմք
թող ինչ կարծիքէ կամ ինչ կու-
սակցութեանէ կաղէ թող ըլլայ,
հերիք է որ Մատենագարանի
բարեկամ ըլլալով վասն որոյ բա-
ցայացաւ կրանք որ Մատենա-
գարանը իր նպատակէն դուրս
ուրիշ որ և է ինդիրներու առ-
պարեզ չկրնար ըլլալ:

Սա ալ կաղեմք աւելցնել
որ Տնտ. Խորհրդոյ անդամք,
երեքարթի օր ապարտոշտու գոր-
պով պահանջեցին Մատենագա-
րանի մէջ նիստ ընել. ևս աչ-
խատեցայ զիրենք համազել թէ
իրենց նախորդ սենեակը բաց
է, թաղ. Խորհրդարանը բաց է,
վերջապէս ուրիշ որ որ ուղին
նիստ կրնան ընել, և թէ իրենց
մասնաւորապէս Մատենագա-
րանը պահանջելը մեր դորձոց
արդեւք ըլլալ ըսել է, և Ս.
Պատրիարք Հօր կամայն ալ
հակառակ է. բայց տեսնելով
որ իրենք կ'յամառին, կիրքով
կ'խօսին և իրաւունք յարդեւ
չեն ուզեր, ստիպուեցայ ցաւե-
լով իրենց իմացնել թէ առանց
մեր Տնօրէն Ժողովոյ հաւանու-
թեանը և առանց Ս. Պատրի-
արք Հօր հրամանին չեմ կարող
սենեակը իրենց բանալու:

Ահա այս է եղիլութեան
համառօտ պատմութիւնը, ու-
րու մէջ կրնայ տեսնուիլ թէ ոչ
Հալաճեան էֆ. և ոչ Մատենա-
գարանի Տնօրէն Ժողովոյ որեւէ
մէկ անդամը կրնար Ս. Պատրի-
արք Հօր գալուստին դէմ եղած
ըլլալ, կամ պատճառ՝ այն տե-
սակ ազեղ իրողութեանց, զորս
մտքէ անցող անգամ մեր մէջ
չէր կրնար ըլլալ: Ընդ հակառա-
կը Ն. Սրբազանութեան կամայն
համեմատ ևս անձամբ Մատե-
նագարանը պատրաստած էր որ
Բաղ. ժողովոյ յաջորդ երկու

նիստի օրերն ալ բաց էր մինչև
եկեկոյ:

Սա ալ պէտք է ըսեմ որ
Հալաճեան էֆ.ի համար ձեզ
արուած տեղեկութիւնները բո-
ւորովին սուս ու սխալ են, բաց
ի այն օրէն որ մեզի հետ ներ-
կայացաւ, և աւելի խօսք մը
չխօսեցաւ. ինչ որ մեք լսեցինք,
անկից ետքը ոչ չարեքարթի և
ոչ ալ անցեալ ուրբով օր պա-
տենագարանի գալու. ո՞վ է ե-
ղեր զինքը յարեքարթի տես-
նողը որ ևս հոն ըլլալով չեմ
կրցած տեսնել:

Այլուսամ . . . Խմբագիր,
որ դուք ալ մեզ հետ ցու պի-
տի յայտնէք որ այսպիսի սուս
ու սխալ լուրերով ազգին մէջ
խռովութիւն սերմանողներ պա-
կաս չեն:

Մնամ ձերդ ևն.

Յ. Աւուհ

Գործ դր. Ազգ. Մատենագրի.

Կալաթա 19 մայիս 1877

ՆԱԽԱԳՐԱՍԻՈՒՐ

Լոնտոն 1 յունիս
Թայմզ, Պէրլինէն ստացած
տեղեկութեանց վրայ կ'ձանու-
ցանք թէ, Կորչաքօֆ իշխանը
Ազգկանցր կոչուելու հետ Բրո-
քսէթի պիտի երթայ, միմիայն
չմտնակցի պատերազմի թաւ-
րիս գէմ:

Բարիկ 1 յունիս
Երկրին մինչև իսկ արուես-
տաւորաց կարգին մէջ յուզու-
մը կ'շարունակէ:

Վիեննա 1 յունիս
Լայխթենպէրիկի դուքսը Ս.
Բէթէրպպուրկ հասաւ:

(Խմբ. Մանթթ.—Այս դուք-
սը Ռուսիոյ կայսերական գեր-
դաստանին հետ իննամս թիւն
մ'ունի, և որոյ համար կըրուի
թէ՝ Պուլկարիս Ռուսիոյ ձեռքն
անցնելէն յետոյ՝ Պուլկարիոյ
նահանգին ընդհ. կառավարին
ըլլալ օրոշուեր է:)

Բէթթա 1 յունիս
Հէրմանշթատի մէջ Բուսմանի-
տցի վիրաւորելով օգնելու հա-
մար կաղմուած Իլիմայց Գոմի-
թէն լուծուեցաւ:

Պուրքէշ 1 յունիս
Սուլինայի կողմը փոխա-
դարձ թնդանթներու ումբա-
ձըգութիւն մը տեղի ունեցաւ:
Ռուսիոյ կայսեր նախագա-
հութեամբ պատերազմական
ժողով մը գումարուելէն յետոյ
հրաման պիտի արուի ուստ-
կան բանակին քանուբն անցնե-
լու:

Իպրայիլի և Մակուրիլի
մէջ ուստ զօրաց առողջական
վիճակը շատ գէշ է:

ՉԻՆՈՒՄ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԾԱՐԺՈՒՄՆԵՐ

Սև ծովու օտմ. նաւատորմին հրամանատար Հասան Բաշայ շք. օրուան թուով կ'հեռագրէ թէ, ասկից առաջ ծանուցուած էր որ Ռուսք Սօխումի մօտ Ձէհիլի ամրոցէն մեկնած ամենինն ուղղմամբ երբ, պաշար և ամեն բան այրելով ետ քաշուեր էին, այս անգամ մեր զօրքերն խրիսքի անրոցն ալ գրաւելով, թշնամոյն մէջը թողած 17 թնդանօթը կ'զբտեն, որոց 14ին վրայ Ապտիւլ Մէհրաբի թուրան քանդակուած է եղեր. 2 թնդանօթ ալ Ձէհիլի մէջ գտնուելով, ընդամենը այս 10 թնդանօթը անյուստ շոգենաւով մը Կ. Պօլի պիտի զրկուի: Այս թնդանօթներն նախորդ պատերազմոց մէջ կարսի ամր. թիւններէն ուսաց գրաւելով վերուցած թնդանօթներն ըլլալ կ'երևին:

—Շաբաթ առաւօտ Սպարապետութեան հասած հեռագրէ մը կիմացուի թէ Ռուսք, Արտասանի յարձակումը նման սաստիկ յարձակումը մը կարան ալ առնելու համար, 3 անգամ ուժգին յարձակում մը բերի Ֆնկարսի գէմի իսկ ամեն անգամուն ալ ետ մղուեր են մեծ կարուստ մը կրելով, որոց թիւը 3-4000ի կ'հասնի:

—Թրաքի կըսէ թէ շք. օր Վիտիւնի և Գալաֆաթի մէջ նորէն թնդանօթի կռիւ մ'սկըսեր է:

—Բուսանիոց մէջ Սիբէրգիաը յորդելով կալաքի և իսպայիլի մէջ տեղը գտնուող ուսաց հազարդակցութիւնը ընդհատեր է, ասկից զատ յիշեալ գետին վրայ ուսաց նոր շինած կամարն ալ քանդուելով տարուեր է, որու 60-000 ֆր. ծախք բրած էին: Բրուսի վերայ ձգուած շարժական կամարններուն շտան ալ ջրերէն քշուելով տարուեր են:

—Ռուսք Գանուրն տնցնելու հորիկ եղած կամրիկ և լաստանաւայ պատրաստութիւնները փութացնելու համար, Սեփաստօրէն և Նիքոլայէվէն անձապարանօք 400 հիւսն բերել տուեր են:

—Բուսանիոց կառավարութիւնը պաշարման վիճակ հրատարակեր է իպրայիլի մէջ:

—Կովկասեան բանակին ընդհ. հրամանատար Միքայէլ Գուքսը Տիլիսիէն մեկնելով Պաթումի առաջը գտնուող ուսական բանակը գացեր է:

—Թաքվիմ պաշտօնական թերթը կըսէ թէ, Լազիսթանի կառավարչէն նորէն հեռագիր մը հասեր է, որն որ Արտասանէն եկող Գահրաման անուն ճանրորդի մը պատմութենէն

առնելով կ'ձանուցանէ թէ Արտասանի մէջ տակաւին խեղ մը հեռուակ ու ձիաւոր ուս սիւսի զօրք կ'գտնուին, որոնք շրջակայ ամրութեանց մէջ գտնուած թնդանօթները բերդին մէջ փոխադրելու կ'զբտային:

—Պուքրէշէն կ'հեռագրեն թէ կարողութիւնը այս գշ. օր Գալաֆաթի բուսանական բանակը տքէ անցնելով կ'հրամայէ որ Վիտիւնի բերդին գէմ ուսմը արձակէն, ասոր վրայ Վիտիւնի ալ նետուած ուսմբերէն Յը՝ էշխանին առաջն կցնալով զիւսոր մը կ'վերաւորէ, իսկ էշխանին վնաս մը չըլլար:

—Բուսանուգէն ալ կ'հեռագրեն թէ, այս եշ. օր Բօտիօրից անուն օտմ. թնդանօթանօթակիրը Նիկոպօլսոյ առջևէն Ալուստ գետին բերանը թշնամոյն գրած մարտկոցները բռնբռնակեալ պահուելով, թշնամիին մէկ ուսմը կ'գայ շոգենաւուն մէջ ինարով կ'պայթի, և խել մը անձինք սպաննելէն զատ նաւուն հրամանատարն ալ այնպիսի ծանր կերպիւ կ'վիրաւորէ որ քանի մը ծամէն կ'մեռնի:

—Հէրոէքի հրամանատար Սիւլէյման բաշա, Նիքոլայը պարենաւորելու համար, կաշքայէն մեկնէր է 20 վաշտ հեռուակ զօրքով և 5000 գրաստ պաշարով, երբ Տուկայի կիրճերը կ'հասնի, բազմաթիւ Գարատաղցոց խմբի մը կ'պատահի, որք կիրճերը բռնած էին, ուստի կռուելու սկսելով Գարատաղցոց մեծ կարուստ կ'պատճառէ, իսկ ասոնք տակաւին կիրճերը բռնած կ'կենան Նիքոլայի բերդը այսօր կամ վաղը եթէ պաշար չտան՝ անձնատուր ըլլալու վիճակին մէջ է:

ՆՆՐԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Աւսարիոց դեսպան Ջիշի կամը շք. առաւօտ մեծ Կպարգոսին ծովեզերեայ ապարանքն երթալով երկար տեսակցութենէ մը յետոյ, Եպարգոսը կայս. պալատը գնաց Վեհ. Սուլթանին հետ խորհրդակցելու:

Այս միջոցիւ Գրան Անգլիոյ, Ռուսիոյ և Աւսարիոյ արքունեաց մէջ արագ դեռպանագիտական հարցադակցութիւնը ու բանակցութիւններ կ'փոխանակուին, որոնք իրաց ներկայ կացութեանը վրայօք ըլլալ կերևան:

—Շք. երեկոյ երեկոյ ուշ ատեն Ելուպ բանոց 4 թիւ շոգենաւոր տաճիկ անցորդներով լեցուն նաւակի մը զարնուելով կըսուի թէ ծովը թափող անցորդներէն Չը և 1 ալ նաւավարը կորուստ եկան:

—Վեհ. Սուլթանն նորէն այս անգամ Պալատան տխուր

մէջ գտնուած ձիերը, պէտք եղածին չափ վար գնելէն ետքը, մնացած ամենքն ալ Սպարապետութեան դուռը դրկեց բանակին ծառայութեանը գործածուելու համար:

—Օտմ. Խորհրդարանը այս շք. առաւ Երևանի մէջ Պիտէի օրինաց ծրագրին վիճարանութիւնը ձեռք առնելով, նախաքրնիչ յանձնաժողովոյ կազմէն վատիւքի էֆ. իբր տեղեկաբեր՝ բնմն ելու և յանձնաժողովոյ քննութեան արդիւնքը հաղորդելով, Պէտէլաթը-Ասկէրիէի արոց առթիւ ալ յայտնեց թէ յանձնաժողովը այս տուրքը վերցնել կառավարիկէ, նկատելով որ բոլոր օսմանցի հպատակք, մահմեական եւ ոչմահմեական, հայրենեաց պաշտպանութեանը համար, փոխանակ փրկանքի, անձնագէտ զինուոր ըլլալու պարտականութիւն մ'ստանձնած են: Այս յայտարարութիւնը բարբերսփոխաճք ծափահարութեամբ ընդունեցին և հաւանութիւն յայտնեցին: Յետոյ Եէնիշէհիր լի զատէ Ահմէտ էֆ. խօսք առնելով ըսաւ թէ, տէրութեան մեծամեծաց՝ իրենց ձիերը բանակին տալուն վրայ, զաւառաց ժողովուրդները նորէն անգամ մ'ալ պատերազմ նպատակաւ կ'յօժարին, և թէ արդէն իշտիբի մէջ նորէն հանգանակութեան ձեռնարկուելով, մինչև 10ական և 20ական հազար զ. նպատակ ուղղներ գրտնուեր են:

—Գուշ-Ատասիէն առնուած տեղեկութիւններէն կիմանալով թէ այն կողմը գտնուող հեծեայ ուստիկաններն պատերազմի գաշար դրկուելու համար ճանրայ են ելեր:

—Կառավարութիւնը անցեալ շաբթու պայմանագրութիւն մը կնքեց ձեռնարկուի մը հետ, որն որ կ'խոստանայ օրը 2000 գործաւոր տալ թնդանօթարանի վերադառնութեան, որոշեալ վարձքով մը՝ Պօլսոյ ամրութեանց դժին շինութեանն աշխատելու:

—Վեհ. Սուլթանն ուր. օր Միջօրէի աղօթքէն յետոյ յատուկ շոգենաւով մինչև Վատիւրի նեղուցը ելնելով, երեկոյեան ճաշն ալ Հիւնքեար-Իսկէլէսիի գրեական բրաւ և գիշերն ալ հոն անցոյց:

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Ռուսիա, Անգլիոյ կասկածները փարատելու համար, ներկայ պատերազմը սահմանափակելու նպատակաւ, համաձայնութեան պայմանագիր մը ներկայացուցած ըլլալով Բրիտա-

նական կառավարութեան, Անգլիոյ պաշտօնէութիւնը Տօլնիկ-Սիբիլի վերջին բրած մէկ նիտաին մէջ նկատուող թեան տանելէն յետոյ սոյն առաջարկեալ ծրագիրը, բացէ ի բաց մերժեր է և չէ ընդունելու Լորտ Պիքօնֆիլտ սա կարծիքն ալ նաևս յայտնէր է թէ ինքն այդ ինքնոյն մէջ այսպիսի գետնագիտական կարգադրութեանց անձնագէտ գէմ է:

—Հօպարթ բաշա, հրաման ստանալով Օտէսայի ուստիկանութեանն սկսելու, դրահատար նաւատորմով վարնային գէպայն կողմն ուղեւորեր է:

—Քէօնթէնէնէն կ'հեռագրեն թէ գշ. գիշեր ուստական մակոյկներն Արքատի և Սէմէնտրէ անուն օտմ. շոգենաւոր տակը թորելու ձգել փորձեր բայց չեն յաջուեր:

—Սպարապետութեան կողմէն մեծամեծաց ձիերը բանակին համար ժողովուրդ պահուելու համար Յակոբ Յակոբ էֆ. ի 2 մասակ ձիերն ալ միտաեղ առնելով տարած էին. իսկ կէօչեան էֆ. այս անգամ աղբսագիր մը տալով սրոյ մէջ յիշեալ ձիերն իր եղբորն եղած ըլլալ ուստիկելով ետ տրուելով կ'ընդորէր, Բ. Գուշը ընդունելով այս պահանջումը՝ հրաման բերէ որ իրեն ետ գարձեն այդ 2 ձիերը:

—Յուստատանի նոր պաշտօնէութիւնը իր քաղաքականութիւնը խորհրդարանին ներկայացնելու առթիւ, յայտնեց թէ տէրութիւնը պատերազմական պատրաստութիւններ տեսնելու հարկի մը մէջ կ'գտնուի:

—Մերվի պատերազմի պատրաստուելուն վրայ, Ապա-Իւլ-Քէրիմ բաշա 2-3 վաշտ հեռուակ և ուստիկա զօրք Ատլիէ դրկեր է պէտք եղածին չափ թնդանօթով:

—Վիէնայի թերթերն կըսեն թէ, Նիքոլայի բերդապահ զօրքերն քաղաքին բնակչացը հետ վերջին օրերս գէպի դուրս յարձակում մ'ընելով, զիրենք պաշարող Գարատաղցոց բաւական կորուստ տալէն զատ, իսկ մ'ալ կենդանի առեր են ձեռնուրուն:

—Բուսանուք քաղաքը պարպուելուն, բանտին մէջ գանդուող յանցապարտներն ալ շղթայակապ երեկ մայրաքաղաք բերուելով ստիկանութեան բանալը դրուելոյն:

—Կիմանամք ստոյգ աղբիւրէ թէ՛ մեծամեծաց ձիերն առնուելէն զատ, մասնաւորաց ձիերն ալ ի հարկին ժողովուրդ Սպարապետութեան դուռը որոշուեր է զրկուել:

ԱՅՊ

ՍՈՒՐՆԵԱՆ ԵՐԿՍԵՌ

ՎԱՐՓԱՐԱՆ

ՅԵՆԵՎԵՍ ԵՒ ԳԻՆԵՐՈՒԹԻԿ
որ գաղղղերէնի խօսակցութիւնը
պարտաւորիչ է
վարժարան նախակրթական
ու երկրորդական ուսմանց

Կէտիկ փառայն մեծ փողոցին
վարի ծայրը, դեղագործի խանութին
փրայ թիւ 115 ընդարձակ և օդա-
ւէտ տունը 6 անէ է փեր վարժարա-
նի վերածուած է մեր տնօրէնութեան
ներքէ՛ յաճախող մանկաւայն թիւն է
երբ յիտան. 11 պաշտօնեայք կան
վարժարանին մէջ, որք ամենայն
ճշգրտութեամբ և արդիւնաւոր կերպիւ
կ'դաստիարակեն աշակերտներն ու
աշակերտուհիները:

Ուրիշ հոյ վարժարանաց մէջ ընդ-
հանրապէս գանուած ուսումընդերէն
դաս, որոց աւանդելու մէջ թող Սուր-
թանիէ վարժարանին մէջ թողին նման
է, կուսուցուին նաև բնագիտութիւն,
ստամարտկութիւն, պատմ. եւրոպ'
նօթա (ճայնական երաժշտ.) և աղջը-
կանց համար ձև ու կար ուսուցանե-
լու մեծ ջանք կը լըլուի: Գաղղղերէնի,
թուաղիտութեան և երկրաչափութեան
բարձրագոյն դասերը գրեթէ բոլորը
վին դաղղիերէնով կուսուցուին, իսկ
միւս դասերն հայերէն. թէ՛ աշա-
կերտք և թէ՛ աշակերտուհիք Ձեռնի,
զբօնանց և հանգստեան ատեններ
դաղղիերէն խօսելու պարտաւորեալ
են. այս բանին զիրենք վարժեցնելու
համար վարժարանս մնայուն պաշ-
տօնեայ մ'ունի, ամեն օր ալ խօսակ-
ցելու վարժութեան դաս կուսուցուի:

Վարժարանս կընդունուին նաև
երեք ու կէս տարեկան մանչ և աղ-
ջիկ մանուկներ, որոց դաստիարակու-
թիւնը գործաւորա վարժութեանց մը
յանձնուած է, և որոց համար Գեր-
մանիոյ մէջ գործածուած զբօսալի և
օդապար խաղալիքներ կան վարժա-
րանին մէջ: Պատիկ մանկանց ամսական
թողակն է 1 արծ. մճա. եւսմանայն
կանխիկ. լեզու և ուսմունք ուսանա-
ղաց ամսաթողակն է 2 արծ. մճա. ե-
ւսմանայն կանխիկ. անոնք որ ցերեկ-
եայ ճաղը վարժարանէն ընել կուզեն,
ամսական ծարձ. մէ՛ծիտ աւելի վը-
ճարելու են:

Գիշերթիկ աշակերտներն սմեն
խնամք ու հանգստութիւն կ'վայելեն
մեր ընտանեաց մէջ, իբրև թէ իրենց
սունն ըլլային. այսպիսեաց եւսմ-
սընայ թողակն է 8 օսմ. ոսկի կան-
խիկ. գաւառներէն զրկուելիք ա-
ղայք պէտք է որ մայրաքաղաքիս
մէջ իրենց ծնողաց կամ պաշտպանաց
ներկայացուցին ունենան:

Ծաղիկ շինել սովոր ուղող տիկ-
նայք և աղջկունք ալ կընդունուին
վարժարանին մէջ յատուկ սակարկու-
թեամբ: Բիւնոյն ուսման յատուկ
ջանք կը լըլուի, դասատուն է բնիկ
գաղղ. Օրբիդը Տալիէ, վրայեալ Բա-
րիզու Երաժշտական վարժարանէն
(քօնսէրվաթուս), բիւնօ դաս առ-
նու ուղղներն եթէ վարժարանիս ա-
շակերտներէն են, պիտի վճարեն ամ-
սական 2 1/2 արծ. մճիտ. իսկ եթէ

գրէն միայն բիւնօ դաս առնելու
տիկնայք կամ օրբորդք գան՝ Յարժ.
մճա. եւսմանայն կանխիկ:

Ուղղը կընայ այցելել վարժա-
րանին. ընդարձակ սեղեկութեանց
համար ևս պէտք է վարժարան գալով
տնօրէնութեան հետ տեսակցել:

Տէր և Տնօրէն
77 մարտ Ա. Ա. Մարտիան

Խօսքէջտէ Բրօթէսթա-
նիթ Ժողովարանըն իթ խօսակցուէ
պուլունան վասը պիր արսա
սաթլըդ օլուպ, վէ խթէյէնէ
խթէտիդի մըգտարը վէրլիէ-
պիլէճէղինաէն, զիտէ մալու-
մաթ ալմադ իսթէյէնէր Գալա-
թասա Մինասեան Ամերիգան
մաղաղասընաա Մինասեան Պեա-
րոս աղայա միւրաճատթ էյէ-
մէլէրի իրան օլունուր:

Ղալաթիա ԾԲ. 18 Մայիս
ԸՆԳՆ. ՊԱՐՏ. ԱՐԺ.

Table with 2 columns: Item, Price. Includes Բաց 09 07, Գոց 09 07, Բարձր գին 09 07, Ծած գին 09 07.

Table with 2 columns: Item, Price. Includes Փոխ. 65թ 46, 65թ 18, 69թ 43, 73թ 41.

Table with 2 columns: Item, Price. Includes Գանձատմա 14.20, Սօսիթէ Ժէնէրալ 2.24, Սօսիթէ Օթօման 1.18, Պանք աը Բօսթա 2.20, Գրէտի Ժէնէրալ 1.28, Թրամվէյ 1.50, Բուս. Երկաթուղի 25, Բուս. կարօն Գօսա. 0/0 1, Տօկոս 0/0 1, Բըբօր, Հէվալէտիչ.

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

Table with 2 columns: Item, Price. Includes Անգղ. ոսկի 109.50, Գաղղ. 87.50, Բօլ 89.10, Գարսօն արծաթ 16, Թղթաղղաճ 14, Գրքմից 51.12, Հինգնոց 17, մէթալիք 17 20, Ճերմակ մէճիտ 5.14, Պղինձ 179 20, Թղթաղղամ գոցուած 179.50.

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿԻՆ
Անոր կուսակալութեան ներքև
գտնուող մէկ քանի գլխաւոր
քաղաքաց

ԱՇԽՍՏԱՍԻՐԵՍՑ

Սոյն տեղեկագիրը որ Սեփա-
տիոյ մէջ եղած հնութիւնները կը
նկարագրէ իրօտ հետաքրքրական
կերպով, յուսամք որ բանասիրաց
հասնելի և միանգամայն օգտակար

կրնայ ըլլալ. կը վաճառի Յ. Մար-
գարեան գրատունը Մէրճան չարը
թիւ 87.
Ի գին 8 զը:

ԾՈՂԷՆ ԶԸ ԲՈՆՈՒԿԻՆՈՒ ԴԵՂ

Բաղադրութեամբ
Լ. ՏԻՆԵԱ ԴԵՂԱԳՈՐԾԻ

Ծովային ճանբարդաց հա-
մար անհրաժեշտ եղած սոյն
հեղուկը որ ամեն անգամ ծովէ
բռնուելուն մէկ խահուէի զը-
գալ մը սոյն դեղէն առնելով,
կրկին չափովը պարզ ջրի մէջ
խառնելով խմած ատենը մարդ
վերտօին իւր հանգարտ ու ա-
ւտղ վիճակը կստանայ, կը
գտնուի Լ. Յինեայի դեղարա-
նը, Ղալաթիա Մեծ փողոց,
թիւ 108 մէկ շէք 2 ու կէս ֆը.
գնով:

ՄԻՆԱՍԵԱՆԻՆ ՄԱՂԱՋԱՆ

ԳՏՆՈՒԱԾ
ՈՒ

ՓԱՆՍԱԵ

Կոչուած ցաւի դեղը բարբաթին խո-
տեղէններէ բաղադրուած ըլլալով
թէ՛ ներսէն և թէ՛ դարսէն կ'գոր-
ծածուի ու բաղմաթիւ ցաւեր ու հի-
ւանդութիւններ շտափ կը բժշկէ:

Ամեն տեսակ Գոլի, Ստամբուի,
մէլքի կամ Աղիքներու ցաւեր. ու
նաև թանջք, Գօլթրա և այլ ամառ-
ուան հիւանդութիւններ ունեցողնե-
րը այս դեղէն խմելու են հեաև.
կալ կերպով կէս գաւաթ լուրի մէջ:
Գիր ասորի զրգալէն աւելի շաքար.
վրան լեցուր անուշի զրգալ մը ֆա-
նասէ, տղէկ մը խառնէ ու խմէ:
Կոկորդի հիւանդութեանց և Ուռեց-
քի համար դեղը վերոյիշեալ կերպով
պատրաստէ ու փամբ կտմ երկու փա-
մը հեղ մը մէկ կամ երկու անուշի
զրգալ այն բաղադրութեան խմէ:
Յօգագաւի բիւնաթիլմ, Ուրքի ցաւի,
Ստամբուի ու տեսակ տեսակ կուտկի-
ցաւերու համար դուրսէն ֆանասէ
քսիլով աղէկ մը շինելու է: Ակուա-
յի ցաւի համար քիչ մը բամբակ
Փանասէի մէջ թափխելով ցաւած
ակուային վրայ գնելու է:

Ամեն առեն երբոր ցաւի մը
համար դուրսէն ֆանասէ քսիլ հարկ
ըլլայ: Եթէ քիչ մ'ալ խմուի աւելի
շուտ բժշկութիւն կը լըլու:

Մարմնոյն այրուած կամ ճըմ.
լուած տեղերը բժշկելու համար. վը-
տանդը պատահածին պէս ֆանասէ-
էն սան աղէկ մը լեցունելու է: Գա-
նակով և. կորուած վերքերը բը-
ժըղիելու համար արիւնը չի սրբած
շուտով մը վերքը կապելու և կապին
վրայէն ֆանասէ լեցունելու է մինչև
որ լաւ մը թըլի ֆանասէն նաև ար-
եան շըլմը կարագայնէ ու բոլոր
բնութիւնը կը զօրացնէ:
Այս դեղին օգտակարութեանը
վրայ երկարօրէն գրել աւելորդ կը

համարներ. գործածողները պայն
միտա ը գոլին, ուղղը կընայ ան-
սաւր փորձել. գինն աժան է: Կ'ժա-
խուի Մինասեան և Ընկերաց Ամերի-
կեան վաճառատունը որ ի Ղալաթիա
կ. Պօլս:

ԹԱՏՐՈՆ

ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՑ
ՊԱՏՅԱՐԱՋԱՐԻ

1876
ՏՊԵՂՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Այս ընտիր գործը որոյ օգտակա-
րութեան ու կարեւորութիւնը ամեն
ընթացքսէր նա մանաւանդ օղոյնց
դաստիարակութիւն փափաքող աղ-
գայնոց յայտնի է, 1876 տարոյ Յուն-
վար 1 էն սկսեալ 13 օրն անդամ մը
իրը հանդէս հրատարակուած է մին-
չև 1876 Գիկտ. վերջ, մաքուր թըղ-
թով և աղիւ սպա գրութեամբ:

Այժմ գործին ամբողջ տարե-
կանը (24 թիւ, քառածայ մեծաղիր)
103 պատկերներով մասնաւոր խնա-
մք և վայելուչ կերպիւ քառթօնէ
կաղմուած կը գտնուի միայն ֆարի-
զու և Մէրճան չարը Պաղտոտար Ա-
ղսի գրատունները ի գին մէկուկէս
մէճիտայէ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԱՐԱՏՔ
ԳՐԻՍՏՈՆԵԱՆ ԸՆՏԱՆԵԱՑ
ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

Մէյնան Եպոնի նշանաւոր այս
գործն, որ զլիաւոր երկք էական
հանգամանքներու, ամուսնութեան,
որդուց և ընտանեաց վրայ հիմներ
է հեղինակը, այսպիսի խրատական
հեղինակութիւն մը խիստ արժան
դասած է մեր աղգայնոց ալ օգտա-
յար ընելու նպատակաւ թարգմանու-
թեամբ ի լոյս ընծայել Սրմաշու Ս.
Ղևանդեանց զիշերթիկայ վարժարա-
նի աշակերտներէն արգոյ Յակոբոս
կ. Սրապեան, և վանահօր հրա-
մանաւ անդ սպաղարեալ, վաճառի է
Պօլս Ե. Գալաֆեան գրատունը:

Գին 1 ֆը. կամ 9 զըլ.
Փողոց Զաղմագճըլար թիւ 20

ՄԷԼԱՆՕԺԷՆ

ԴԵՂԱՋՈՒՐ
ՃԵՐՄԱԿ ՄԱՋԵՐ ՆԵՐԿԵՆՈՒ

Այս դեղը, որ մէկ վայրէ
կենի մէջ և ամեն գոյնով կը
ներկէ ճերմա մազերն ու մո-
րուքներն, առանց փնտասելու
մարթին և առանց անախտը՛
սեէ հոտ մ'ունենալու վորձը-
ուած յատկութիւն մ'ունենա-
լով կը գտնուի Տէլլա Սուտայի,
Զօպանեանի և Բիւշիւքեանի
սեղարանները: